

**

Վեց տերութիւններն նաւային ցոյց մը ընել որոշած են՝ իրենց որոշումներն Բ. Դրան գործադրել տալու համար:

Բ. Դուռն այս նաւային ցոյցին առաջքն առնելու ճամբայ մը գտնելու նպատակաւ, բոլոր նախարարներն ժողով հրաւիրելով որոշեց՝ Մէքկէյէն վեց կախարդներ բերել տալ, որպէս զի կարդան, դէտերը հրաւիրեն եւ վեց տերութիւններու մէջ անհամաձայնութիւն գոյացունեն:

Առ այժմ դէտերու տեղ մարախներ թափուեցան մայրաքաղաքիս մէջ, որոնց մէկ մասը անօթութենէ մեռաւ եւ միւս մասն ալ սնունդ չգտնելուն պատճառաւ Ասիոյ կողմն անցաւ:

**

Լրագրի մը մէջ հետեւեալը կկարդամ.

«Բ. Դուռն պատերազմական նախարարին խնդրանօք հրաման դրկած է գաւառական իշխանութիւններուն, որ իւրաքանչիւր գաւառի մէջ գտնուած ձիերուն վիճակագրութիւնը շինելով Բ. Դրան դրկեն»:

Հապա պայտերու վիճակագրութիւնը:

Վերջին պատերազմէն դարձող ձիերուն մեծ մասը պայտ չունէին:

**

Ինչ որ գուշակած էի անցեալ ամսու առաջին օրը՝ այս ամսու տասնըինգին կատարուեցաւ:

Ըսած էի պ. Գ. Ապտուլլահ վառվոռուն երիտասարդի համար կամ քառասասարդի համար, թէ չպիտի կարողանայ Միացեալ Ընկերութեան գործադիր ժողովոյ մէջ ատենապետութեան պաշտօն վարել, եւ թէ ինքն արժանաւորութիւն ունի ատենապետութիւն ընել այնպիսի ժողովոյ մը, որու պաշտօն լինի շէնքեր կառուցանել օդին մէջ:

Մարգարէութիւնս կատարուեցաւ. քառսունհինգ օր շարունակ վիճաբանէլէն ետք գործադիր ժողովոյ անդամներն հրաժարական տուին: Իրենց հրաժարականն ընդունուեցաւ, եւ ուրիշ գործադիր ժողով մը ընտրուեցաւ:

Այժմեան գործադիր ժողովը պաշտօնէութեան ձեւով կազմուեցաւ: Պ. Յովհաննէս Թորոսեանի յանձնուեցաւ, որ իւր ուզած անձերէն գործադիր ժողով մը կազմէ, եւ այս անձն ալ կազմեց զայն այն անձերէն, զորս ուզելու